Կարգապահական գործ թիվ ԿԳ-21008

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի հունիսի 29-ի թիվ 278-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/164-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՍՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՌԱՖԱԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Էմին Բեգլարյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մանե Կարապետյանի, Մարինե Ֆարմանյանի, Կարեն Սարդարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի, Արսեն Հարությունյանի և Պավել Գյուլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Սասուն Մարտիրոսի Ռաֆաելյանին (արտոնագիր՝ 2555) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Փաստաբան Տիգրան Ղազարյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է հետևյալը.

Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների բաժնում թիվ 10156820 քրեական գործով Ալիսա Նալչաջյանի և Արման Արզաքանցյանի միջև կատարվել է առերես հարցաքննություն: Քննչական գործողությանը Դիմողը մասնակցել է որպես վկա Ալիսա Նալչաջյանի ներկայացուցիչ, իսկ Սասուն Ռաֆաելյանը՝ **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** որպես Արման Արզաքանցյանի փաստաբան: Առերես հարցաքննության ընթացքում, երբ հարց հնչեց Արման Արզաքանցյանին, Փաստաբանը առերևույթ սկսել է խոսել կամ հուշել պատասխանը, որի վերաբերյալ Դիմողը կատարել է հայտարարություն: Ի պատասխան Դիմողի հայտարարությանը այն մասին, որ Փաստաբանը հուշում է պատասխանը, Փաստաբանը քննիչի և քննչական գործողության մասնակիցների ներկայությամբ հայտարարեց, որ «**Դիմողը նենգաբար ստում է»:**

Դիմողը խնդրել է փաստաբան Սասուն Ռաֆաելյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և քննարկել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 05.04.2021թ. թիվ 64-Ա/ԿԳ-21008 որոշման հիման վրա փաստաբան Սասուն Ռաֆաելյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք**) 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

06.04.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով պնդել է Դիմումով իր հայտնածը:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը ներկայացրել է բացատրություն և հայտնել հետևյալը.

Փաստաբան Սասուն Ռաֆաելյանի կողմից ներկայացված բացատրությունը Պալատում մուտքագրվել է 16.03.2021 թվականին: Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ 15.02.2021թ-ին թիվ 10156820 քրեական գործով ինքը մասնակցել է Արման Արզաքանցյանի առերես հարցաքննությանը որպես փաստաբան: Փաստաբանն ընդունել է, որ հայտարարել է, թե Տիգրան Ղազարյանը **<u>նենգաբար ստում է</u>**: Փաստաբանը նշել է, որ չի զղջում իր հնչեցրած արտահայտության համար և դա պայմանավորված է եղել Դիմողի մանիպուլյացիոն գործելաոճով: Փաստաբանը հավելել է, որ ստեղծված իրավիճակում, եթե միայն ասեր, որ Դիմողը ստում է, կնշանակեր ոչինչ չասել:

Փաստաբանը ներկայացել է կարգապահական նիստին և պնդել է բացատրությամբ իր հայտնածը, վերջինս ընդունել է, որ հայտարարել է, թե Տիգրան Ղազարյանը նենգաբար ստում է:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 07.06.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբանն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 08.06.2021թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 29.06.2021թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

- ***Փաստաբան Սասուն Ռաֆաելյանը ի պատասխան Դիմողի հայտարարության, ասել է, որ վերջինս նենգաբար ստում է:*** Սույն փաստը հաստատված է համարվում փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությամբ, որով վերջինս ընդունել է վերոնշյալ փաստը:

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սասուն Ռաֆաելյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 22.02.2019թ., և 2019-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սասուն Ռաֆաելյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 05.04.2021թ. թիվ 64-Ա/ԿԳ-21008 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Դիմողի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավը արատավորող գործողություններ ու արտահայտություններ կատարելու և քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելու վարքագիծը ստուգելու նպատակով:

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:*

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի մեջբերված դրույթները բովանդակային առումով փոխկապակցված են, և փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումը որպես կանոն հանգեցնում է նաև 5.1.2 ենթակետի պահանջի խախտման: Հետևաբար Խորհուրդը նշված իրավադրույթների խախտման հարցը քննարկում է համակցության մեջ և անհրաժեշտ է համարում պարզել՝

- արդյո՞ք Պատասխանողը Դիմողի նկատմամբ թույլ է տվել այնպիսի գործողություններ կամ արտահայտություններ, որոնք արատավորում են փաստաբանի արժանապատվությունը և համբավը՝ այդպիսով քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելով Դիմողի հանդեպ:

Կանոնագիրքը հստակ սահմանել է փաստաբանների միջև շփման նվազագույն կանոնները՝ այն է քաղաքավարությունը և հարգանքը միմյանց նկատմամբ:

Փաստաբանների, այդ թվում դատավարական հակառակորդ կողմերի շահերը ներկայացնող փաստաբանների կողմից մեկը մյուսի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Այլ փաստաբանի նկատմամբ քաղաքավարի վերաբերմունքը և հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն և այն նվազագույն պահանջը, որը կիրառելի է փաստաբանների միջև հարաբերություններում, որը փաստաբանական էթիկայի հիմնաքարն է:

Սույն գործի շրջանակներում հաստատվել է Փաստաբանի կողմից Դիմողի հասցեին «**<u>նենգաբար ստում է</u>**» արտահայտությունն անելու հանգամանքը, ինչը որևէ կերպ չի կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» կատեգորիայի շրջանակներում:

Ավելին՝ իրենց վարքագծով փաստաբանները պետք է օրինակ ծառայեն այլ անձանց և նաև իրենց վստահորդների համար, իսկ իրավական կամ այլ վեճը միմյանց վիրավորելու վերածելը հարիր չէ փաստաբանի բարձր կոչմանը:

Այլ փաստաբանի նկատմամբ քաղաքավարի վերաբերմունքը և հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն և այն նվազագույն պահանջը, որը կիրառելի է փաստաբանների միջև հարաբերություններում և փաստաբանական էթիկայի հիմնաքարն է:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Վերոգրյալը հաշվի առնելով, արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտում:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից դրսևորած մեղքի ձևին, Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը դիտավորությամբ է կատարել իրեն վերագրվող արարքը, քանի որ գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ հաշվի է

առնվում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Սասուն Ռաֆաելյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,
Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Փաստաբան Սասուն Մարտիրոսի Ռաֆաելյանին (արտոնագիր՝ թիվ 2555) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սասուն Մարտիրոսի Ռաֆաելյանի (արտոնագիր՝ թիվ 2555) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Սասուն Մարտիրոսի Ռաֆաելյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Էմին Բեգլարյան

29 հունիսի 2021թ.
թիվ ԿԳ/164-Ա
ք. Երևան